Այսօր տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի հերթական նիստը, որը վարել է հանձնաժողովի նախագահ Սիմոն Տեր-Սիմոնյանը:

Հանձնաժողովը քննարկել է 9 բարեգործական ծրագիր:

Մասնավորապես, քննարկվել և հաստատվել են՝

«Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Խաչարձան գյուղի բուժկետի և բազմաֆունկցիոնալ սրահի կառուցման նախագծում» ծրագիրը.

«Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի երկու համայնքների բուժկետերի, մեկ համայնքի մանկապարտեզի սանհանգույցների և մեկ համայնքի մանկապարտեզի խոհանոցի վերանորոգում» ծրագիրը.

«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Սանհանգույցի կառուցում» ծրագիրը.

«Քրոնիմետ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի «Կայան-Ավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի նախակրթարանի տանիքի մասնակի վերանորոգում» և Երևանի «Թիվ 9 մանկական պոլիկլինիկա» ՓԲԸ-ի մասնաշենքի մասնակի վերանորոգում» ծրագրերը.

Նորայր Խաչատրյանի կողմից իրականացվող «Նոր Վարագավանքի Սուրբ Աստվածածին եկեղեցու վերանորոգում» ծրագիրը.

«Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելումը Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի 60 գյուղական համայնքներում» և «Հայկական կարիտաս» ԲՀԿ-ի «Առողջության առաջնային պահպանման կենտրոնի վերանորոգում» ծրագրերը.

«Հայ ավստրիական բարեգործական կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Գյումրու մոր և մանկան ավստրիական հիվանդանոց» ՓԲԸ-ին բուժսարքավորումների տեղադրում» ծրագիրը.

Նիստում քննարկվել և հաստատվել են նաև նախկինում հաստատված ծրագրերի շրջանակներում իրականացվող հարակից գործարքներ և տարբեր կազմակերպությունների հասցեներով ստացված բարեգործական բեռների ներմուծման ծրագրեր: